

**ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ
ԱՐԱԲԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ 20-ՐԴ ԴԱՐԻ
ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ**

*Մերվաթ Ջումա Աբդալլահ Օսման
ԵՊՀ արաբագիտության ամբիոնի ասպիրանտ
mervatgomaa0@gmail.com*

***Բանալի բառեր**¹ արաբականացում, գրական արաբերեն, բնագիտական առարկաների դասավանդում, լեզվական հակամարտություն*

Արաբական հասարակությունը 20-րդ դարի երկրորդ կեսից՝ հետգաղութատիրական ժամանակաշրջանից ի վեր, հայտնվել է բնագիտական առարկաները ոչ արաբերենով դասավանդելու հիմնախնդրի առջև, ինչը բացասաբար է ազդում գիտական առաջընթացի և զարգացման վրա և տանում դեպի գիտությունների ոլորտի «արևմտականացում» ու գիտության, տեխնոլոգիայի և արաբական հասարակության միջև կապող օղակի թուլացում: Արաբականացման¹ գործընթացի մասին սկսեցին մտածել այն բանից հետո, երբ բժշկական, պոլիտեխնիկական, գյուղատնտեսական և ռազմական գործի այն ինստիտուտները, որոնք հիմնել էր Մուհամմադ Ալի փաշան (1769-1849) և որոնցում դասավանդման պաշտոնական լեզուն արաբերենն էր, վերածվեցին արաբական համալսարանների, որոնցում կրթությունը դարձավ այլ լեզուներով, օրինակ՝

¹ Արաբականացում եզրի տակ ենթադրվում է արաբերենի կիրառումը արդի գիտատեխնիկական բոլոր ոլորտներում, արաբական համալսարաններում այդ գիտակարգերի դասավանդման օտար լեզվի փոխարինումն արաբերենով, արաբերենն ընդհանրապես գիտության, կրթության, կառավարման առաջնային լեզու դարձնելը:

անգլերեն, ֆրանսերեն և այլն, ինչն աղետ դարձավ արաբերենի համար՝ դուրս բերելով նրան գիտության մետալեզոնների շրջանակից:

Արաբերենը փոխարինվեց անգլերենով 1882 թվականին՝ անգլիական նվաճումից անմիջապես հետո: Նույնը տեղի ունեցավ Բեյրութի Ամերիկյան համալսարանում, որը նույն տարում որոշեց արդի գիտակարգերը դասավանդել անգլերենով և ի կատար ածեց իր որոշումն առաջին կուրսի ուսանողների նկատմամբ: Նույնը տեղի ունեցավ Սուրբ Հովսեփի դպրոցում (Ճիզվիտական դպրոց), և ֆրանսերենը զբաղեցրեց արաբերենի տեղը:

19-րդ դարի վերջում և 20-րդ դարակզբին արաբական մշակութային վերածննդի լույսի ներքո սկսվեց մի շարժում, որն ամբողջությամբ նպատակուղղված էր արաբերենի պահպանմանը, դրա համապատասխանեցմանն արդի գիտությունների և արվեստների պահանջներին և տերմինաբանության ստեղծմանը: Սակայն առ այսօր արդի գիտակարգերն արաբական համալսարանների մեծ մասում շարունակում են դասավանդվել ոչ արաբերենով²:

Գիտակարգերի դասավանդումը ոչ արաբերենով վտանգավոր է երկու տեսանկյունից. առաջինն օտար լեզվի՝ մայրենիի տեղը զբաղեցնելն է, երկրորդը՝ մայրենի լեզվի սոցիալական դերակատարության նվազումը³, երբ թափանցած օտար լեզուն դառնում է առաջընթացի, գիտության և նրբաճաշակության լեզու, իսկ բուն մայրենին՝ հետամնաց, գավառային ամենի խորհրդանիշ:

Արաբականացման կոչն այս համատեքստում բացահայտ քաղաքական նշանակություն է ստանում: Այն ազգային միասնականության կոչ է և փորձ՝ դադարեցնելու

² مصطفى عوض بني ذياب: التخطيط اللغوي والتعريب، جامعة البلقاء التطبيقية – الأردن . ص. 43.
³ عبد الله العروي: ثقافتنا في ضوء التاريخ، المركز الثقافي العربي، بيروت، الطبعة الثانية 1988، ص. 214.

հասարակությունը լեզվական և մշակութային երկու կեսի բաժանող վտանգավոր ընթացքը:

Ստորև կներկայացվեն գիտակարգերի՝ օտար լեզվով դասավանդման բացասական հետևանքներից առավել ակնհայտները.

1. Լեզվական հակամարտությունը.

Սա օտար լեզվով դասավանդման առավել ցայտուն բացասական հետևանքներից է, որից բխում են մյուս բոլոր հետևանքները: Օտար լեզուներով դասավանդումը լեզվական բացահայտ կոնֆլիկտ է առաջացնում: Այն նվազեցնում է ոչ միայն արաբերենի իմացության աստիճանը, այլև աստիճանաբար հանգեցնում հոգեբանական օտարման, արաբական ժառանգության հետ կապի խզման, ինչը նկատվում է աճող սերնդի զգալի մասի մոտ:

Ինչ վերաբերում է գիտական ազդեցության կողմին, ապա առկա իրավիճակի շարունակականությունն է՛լ ավելի է մեծացնում կախվածությունը զարգացած երկրներից, որոնք հանդիսանում են գիտական առաջընթացի առաջամարտիկները, և պարտադրում քայլել նրանց ետևից՝ յուրացնելով այն ամենը, ինչ նրանք ստեղծում են, և միշտ գտնվել զարգացման գնացքի ետնամասում:

Այսպիսին է արաբական իրականությունը ներկայումս: Մինչդեռ կան երկրներ և ազգեր, որոնք խուսափել են այդ վտանգից, և այսօր առաջատար պետությունների թվին են պատկանում (Մալազիա, Չինաստան, Կորեա), քանի որ նրանք գիտական առաջընթացի ձեռքբերքումները թարգմանել են և փոխանցել սեփական լեզվով: Այդպիսի հաջող օրինակներ կան նաև արաբական աշխարհում, ինչը կարելի է տեսնել, օրինակ, Սիրիայում՝ բժշկության բնագավառում: Հետևաբար՝ արաբերենը

գիտական ասպարեզում կիրառելը ոչ թե խոչընդոտ է հանդիսանում առաջընթացի համար, այլ նպաստում է գիտական ոլորտի զարգացմանը:

2. Արժանապատվության պակասը

Արաբականացման ճանապարհին հաճախ հանդիպող խոչընդոտներից են հասարակության որոշ շրջանակների կողմից արաբականացման գործընթացի բարդության շահարկումը, արաբական բարբառների դիրքի ամրապնդումն ի հաշիվ գրական արաբերենի, ինչը մասնավորապես արտահայտվում է որոշ արաբական համալսարաններում ժողովրդական գրականության բաժինների բացմամբ, այս ամենին գումարած՝ լատինատառ արաբերենի տարածումը և անգլերենի դասավանդումը տարրական դպրոցում: Վերջինս բացասական ազդեցություն է ունենում աշակերտների մտածողության վրա, քանի որ դա արվում է արաբերենի և նրա հետ կապված առարկաների դասավանդման դասաժամերի հաշվին⁴:

Վերոնշյալից բացի՝ արաբերենով նվազ հպարտանալու վրա իր ակնհայտ ազդեցությունն ունի գիտակարգերի դասավանդումն օտար լեզուներով, քանի որ դրանք ոչ արաբերենով դասավանդելը ենթադրում է, որ արաբերենն ունակ չէ քայլել ժամանակաշրջանին և գիտական առաջընթացին զուգահեռ: Դա ավելացնում է օտար լեզվի առջև պարտվողականությունը և արմատավորում այն պատկերացումը, թե արաբերենը չի կարող արտահայտել ժամանակակից գիտությունները և խոչընդոտում է արաբ ժողովրդի առաջընթացին, որին հասնելու միակ ճանապարհը օտար լեզու սովորելն է՝ մոռանալով, որ ազգերը միայն իրենց լեզվով են առաջընթաց ունենում, ինչի մասին վկայում է հին և նոր պատմությունը:

⁴ محمود أحمد السيد: مجلة مجمع اللغة العربية بالقاهرة العدد 81، ص 244-262.

3. Ինքնության կորստի վտանգը.

Մուսուլման արաբ ազգը գլոբալիզացիայի դարաշրջանում լուրջ վտանգի առջև է հայտնվել, որը սպառնում է նրա ինքնության բոլոր հիմքերին՝ լեզվին, կրոնին, մշակույթին և այլն: Այսպես, օտար լեզուներով դասավանդելու միջոցով արաբական գիտակցություն են թափանցում նաև մշակութային, հասարակական և այլ վտանգավոր կարծրատիպեր, ինչպես՝ օտար մշակույթը սեփական մշակույթից վերադասելը, օտարամոլության դրսևորումները լեզվում, վարքում և արտաքինում, մասնավորապես՝ ավելի բարձրաշխարհիկ երևալու և ուշադրություն գրավելու նպատակով օտար բառերի կիրառումն այն դեպքում, երբ կան դրանց արաբերեն համարժեքները:

Գլոբալիզացիայի դարաշրջանում օտար ազդեցությունը չի սահմանափակվում միայն օտար լեզուներով դասավանդմամբ: Կան բազմաթիվ հեռուստատեսային ալիքներ, որոնք ծանոթացնում են օտար մշակույթներին և հասարակություններին՝ նույնիսկ առանց դրանց լեզուների իմացության: Տարատեսակ մատչելի ՋԼՄ-ների միջոցով երեխաները լսում են արտասահմանյան մանկական երգեր՝ առանց դրանք հասկանալու, կրկնօրինակում են օտար պահվածքն ու արտաքին տեսքը:

4. Ուղեղների արտահոսքը.

Ուղեղների արտահոսքն, ընդհանուր առմամբ, մտավոր, գիտական և մշակութային ասպարեզներում խիստ անհանգստացնող արդի հիմնախնդիրներից է, քանի որ տարբեր ոլորտներում աչքի ընկնող գիտնականներից շատերն են տեղափոխվում օտար երկրներ՝ այնտեղ իրենց համար ստեղծագործելու և արարելու հնարավորություններ փնտրելով: Այս երևույթն իր ազդեցությունն է թողնում արաբ ժողովրդի և նրա

հետամնացության վրա, քանի որ վերջինս կորցնում է այն անհատներին, որոնք, թերևս, կարող էին նպաստել դրական փոփոխություններին և առաջընթացին: Այս ոլորտում մի շարք վտանգավոր վիճակագրական տվյալներ կան, որոնք ցույց են տալիս, որ արտագաղթողներից ոմանք ստանձնել են մի շարք հետազոտական կենտրոնների և համալսարանների ղեկավարումը և դարձել են այն հասարակությունների մի մասնիկը, որտեղ բնակություն են հաստատել:

Ինչ վերաբերում է ուսման նպատակով այլ երկրներ մեկնելուն (օտար լեզուներով սովորելու), ապա այն չի կարող համեմատվել նախորդ երևույթի հետ, սակայն նույնպես իր ազդեցությունն է թողնում գիտական ոլորտի վրա. գիտակարգերի՝ օտար լեզուներով ուսուցումը հանգեցնում է տվյալ անձի՝ արաբական աշխարհից կտրվելուն, քանի որ օտար լեզուն դառնում է նրա խոսելու, կարդալու և գրելու հիմնական միջոցը՝ ազդելով արաբերենի տիրապետման մակարդակի վրա և այդպիսով նրան դարձնելով պոտենցիալ արտագաղթող:

Վերոնշյալը հանգեցնում է նրան, որ արաբ մասնագետները, սովորելով և աշխատելով օտար երկրներում, հպարտանում են նրանով, որ տպագրում են իրենց գիտական հոդվածներն արտասահմանյան գիտական ամսագրերում, մինչդեռ որևէ կերպ չեն ծառայել արաբական երկրների առաջընթացին: Զադլուլ ալ-Նազգարը ⁵ նկատում է. «Այն մասնագետները, որոնք ամբողջությամբ իրենց նվիրում են օտար լեզուներով ուսուցմանն ու գիտական աշխատանքին և իրենց աշխատությունները գրում և տպագրում են այդ լեզուներով, աստիճանաբար հեռանում են իրենց հասարակություններից, ինչի արդյունքում, իրենց կամքից անկախ, օտար են դառնում իրենց հարազատների շրջանում: Դա

⁵ 20-րդ դարի եգիպտացի հայտնի աշխարհագրագետ, դուրանագետ:

հանգեցնում է հասարակական և մարդկային կապերի թուլացմանը»⁶:

Արաբական երկրներում բնագիտական առարկաների արաբականացման մարտահրավերները.

- **Ամրապնդել ազգային միասնությունը, զարգացնել ազգային զգացմունքները, ամրապնդել մշակութային կապերն արաբների միջև:**

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո արաբական որոշ երկրներ կարողացան այս կամ այն ձևով ազատվել բացահայտ քաղաքական կախվածությունից, սակայն շարունակեցին թիրախ մնալ մշակութային կախվածության համար: Գաղութարար Արևմուտքն աննախադեպ ձևերով շարունակաբար ձգտում էր ոչնչացնել գրական արաբերենը՝ քաջալերելով տեղական բարբառների տարածումը, մեղադրելով արաբերենին թերի և բարդ լինելու մեջ և պարտադրելով օտար լեզուն: Նրանց դրանում օգնեց նաև արևմտյան երկրների քաղաքակրթական առաջընթացը և արաբական կառավարությունների անկարողությունը⁷:

Պատմությունը մեզ սովորեցնում է, որ որևէ ազգ չի կարող գոյություն ունենալ առանց իր լեզվի, և որ այդ լեզվի կորուստը տանում է դեպի տվյալ ազգի ինքնագիտակցության կորստի, որովհետև նվաճողը միշտ ձգտում է անջատել իր գոհերին նրանց անցյալից՝ կտրելով դրա հետ կապի միջոցը, որը հանդիսանում է նրանց նախնիների արձագանքը և ազգի բնական կենդանի ուժը, քանի որ գրավոր լեզուն այն շաղախն է, որն ապահովում է

⁶ زهير أحمد السباعي،: تجريتي في تعليم الطب باللغة العربية، الدمام: نادي المنطقة الشرقية الأدبي، 1995. ص 13-

15.

⁷ شكري فيصل: المؤتمرات والندوات التي عقدتها المنظمات والهيئات العربية حول تعريب التعليم الجامعي في مجالات المصطلح العلمي والترجمة والتأليف: " عرض ودراسة " ، 1982 .

ազգային միասնության ամբողջականությունը, և այն ամուր պարանն է, որն իրար է կապում ողջերին և մեռածներին, և որով գրվում են ազգի մատյանները⁸:

- **Համատեղել ավանդույթը և արդիականությունը.**

Արաբերենը մի քանի դար շարունակ եղել է գիտության և քաղաքակրթության լեզու, որով խոսում և գրում էին թե՛ արաբները, թե՛ ոչ արաբ մուսուլմանները և թե՛ ոչ մուսուլմանները: Նրանցից շատերը, խորանալով լեզվի գաղտնիքների մեջ, հոյակապ տիրապետում էին արաբերենին և դրանով էին շարադրում իրենց գիտական աշխատությունները՝ գերադասելով այն ժամանակի մյուս լեզուներից: Ալ-Քիևդին (մահ. 873 թ.)⁹ առաջինն էր, ով գիտական տերմինների բառարան կազմեց, որն ընդգրկում էր 98 փիլիսոփայական տերմին, որոնք բոլորը, երկուսից բացի, արաբական ծագում ունեն¹⁰: Իրանական ծագում ունեցող բժիշկ և փիլիսոփա Ալ-Ռազիի (մահ. 925 թ.) «Համապարփակ գիրք բժշկության մասին» աշխատությունը, որը կազմված էր 30 մասից և ընդգրկում էր Հիպոկրատից ի վեր ստեղծված բժշկական ողջ գիտելիքը, ավելի քան 400 տարի Եվրոպայի համար հիմնական բժշկական սկզբնաղբյուր էր հանդիսանում: Առ-Ռազին գրել է նաև քիմիային վերաբերող աշխատություններ և առաջիններից էր, ով քիմիան գիտական մեթոդներ և փորձարկումներ օգտագործող գիտություն դարձրեց: Իբն Սինան (մահ. 1037թ.) դրել է վիրաբուժության և դիահեղձման հիմքերը, հող է նախապատրաստել գիտության կողմից նոր և

⁸مولود قاسم نايت بلقاسم: إنية وأصالة، مطبعة البعث بالجزائر ، وزارة التعليم الأهلي والشئون الدينية ، 1975 ، ص

68

⁹ Արաբ աստվածաբան, փիլիսոփա, մաթեմատիկոս:

¹⁰ ابراهيم السامرائي : في التعريب بين ماضيه وحاضره ، مجلة المجمع العلمي العراقي ، مج 29 عام 1978 ، ص

. 94

նորագույն շրջանում կատարված մի շարք մեծագույն բժշկական հայտնագործությունների համար: Արաբ մաթեմատիկոս, աստղագետ, բժիշկ, դեղագործ Ջաբիր բին Հայյանը (մահ. 815 թ.) առաջիններից էր, որի գրքերը թարգմանվել են լատիներենի, քիմիային վերաբերող նրա գրքերը մինչև 18-րդ դարը Եվրոպայում հիմնական սկզբնաղբյուր էին համարվում: Ալ- Խորեզմիի (մահ. մոտ 850 թ.)՝ հանրահաշվին վերաբերող գրքերից մեկի անունով՝ Kitab al-jabr wa-l-muqabala (Գիրք վերականգնման և համեմատման մասին), եվրոպացիները հավասարումների լուծման վերաբերյալ գիտությունն անվանել են *ալգեբրա*¹⁴:

Վերոթվարկյալը արաբ և մուսուլման գիտնականների՝ գիտական տարբեր ոլորտներում ունեցած և արաբերենով շարադրված աշխատությունների աննշան մասն է միայն և վկայում է այն մասին, որ արաբերենի՝ ոչ գիտական լեզու լինելու մասին բոլոր պնդումները մերկապարանոց են և անհիմն:

- Ամրապնդել համալսարանների և հասարակության միջև կապը.

Համալսարանների ղեկավարները պետք է արաբական համալսարանները և բարձրագույն կրթության մյուս հաստատությունները դարձնեն գիտակից և կայացած անհատականությանը շրջանավարտների դարբնոցներ: Դա չի կարող տեղի ունենալ առանց ազգային լեզվի դերակատարության ուժեղացման: Ջարմանալի հակասություն կա նրանում, որ ուսանողներին սովորեցնում են հարգել արաբերենը և նրա՝ ազգային տեսակի հիմք լինելը, պատմում են նրա առավելությունների և հարուստ ժառանգության մասին, այնուհետև օտարում նրանց այդ լեզվից և դասավանդումն իրականացնում ոչ թե արաբերենով, այլ օտար լեզուներով՝

14 قاسم عثمان نور: التعريب في الوطن العربي، جامعة الخرطوم، 1988، ص 13 و 14.

գործնականորեն հաստատելով, որ այն սահմանափակ և անկարող լեզու է և պիտանի չէ կրթության համար:

- **Միավորել արաբական աշխարհի գիտական մշակույթը և մտավոր ջանքերը.**

Քանի որ պրոֆեսորադասախոսական կազմի անդամներից շատերն ավարտել են ֆրանսիական, գերմանական, ռուսական կամ այլ համալսարաններ, արդյո՞ք նրանք պետք է իրենց առանձին խմբերում օգտագործեն այն լեզուն, որով սովորել են, և մի՞թե չպետք է լինի համալսարան, որը կմիավորի նույն ազգի գիտնականների մտքերն ու աշխատանքի արդյունքները: Եթե մենք չենք դասավանդում արաբերենով, ապա վատնում ենք մեր գիտնականների ջանքերը, և եթե այդ գիտնականները չունեն ընդհանուր լեզու, ապա նրանք չեն հաղորդակցվում միմյանց հետ, չեն ծանոթանում միմյանց աշխատություններին: Այդ պատճառով արաբերենով դասավանդման կոչն իրենից ներկայացնում է արաբական աշխարհում մշակույթի միավորման և գիտական ու մտավոր ջանքերի կենտրոնացման կոչ¹²:

- **Օգնել ուսումնասիրողներին հասկանալ և ընկալել**

Արաբերենով դասավանդումը զգալիորեն հեշտացնում է կրթության ու դաստիարակման պրոցեսը, քանի որ այն մայր լեզուն է, և ուսուցումը թե՛ ուսանողի, թե՛ դասախոսի համար հետաքրքիր պրոցես է դարձնում: Ուսանողները, հասկանալով և արագ ընկալելով լսածը, համագործակցում են դասախոսի հետ, ինչը զգալիորեն խնայում է ժամանակը երկու կողմի համար: Նյութի խորը ընկալումն ավելացնում է ուսանողի ոգևորությունն ու ձգտումը: Կան մի շարք հետազոտություններ, որոնք

¹² أبو خلدون ساطع الحصري: ما هي القومية؟، بيروت، دار العلم للملايين ط2، 1963، ص4.

հաստատում են, որ արաբերենը օգնում է սովորողին ավելի լավ հասկանալ և ըմբռնել նյութը¹³:

1998 թվականին Ալ-Ջառ Ալլահի և Ալ-Անսարիի կողմից Սաուդյան Արաբիայի թագավոր Սաիդի համալսարանի բժշկության ֆակուլտետի 516 ուսանողի հետ անցկացրած հետազոտությունները ցույց են տվել ուսուցման մեջ արաբերենի կիրառման դրական ազդեցությունը: Հարցումները վերաբերել են բժշկության ոլորտում ուսուցման արաբականացման նկատմամբ ուսանողների դիրքորոշմանը: Ուսանողների 49 %-ը հայտնել է, որ հասկանում է օտար լեզուներով մատուցվող դասախոսությունների 75 %-ը, մինչդեռ 45 %-ի համար հասկանալի է ընդամենը 25-75 %-ը: Դասախոսությունների ժամանակ անգլերենին զուգահեռ արաբերենի օգտագործումն ուսանողների շուրջ 90 %-ի մոտ ավելացնում է նյութի ըմբռնման մակարդակը: Միայն արաբերենով դասավանդման պարագայում նրանցից մոտ 60 %-ը նշել է, որ ընկալման տոկոսն ավելանում է, իսկ 40 %-ի մոտ չի ավելանում: Ուսանողների 46 %-ը հայտնել է, որ անգլերեն ուսումնական նյութերի ընթերցումը կրկնակի, իսկ 30%-ի համար՝ եռակի անգամ շատ ժամանակ է պահանջում արաբերեն նյութերի համեմատությամբ, և միայն 17,7 %-ի համար է պահանջվում միևնույն ժամանակը: Հետազոտությունները ցույց են տալիս, որ ուսանողների 27.6 %-ն անգլերենով դասավանդվող առարկայի նյութերն արաբերենով գրելիս եռակի պակաս ժամանակի կարիք ունի, 36.9 %-ը՝ կրկնակի պակաս, 27 %-ը՝ նույն ժամանակի: Հարցվողների 45 %-ը գերադասում է քննությանը պատասխանել արաբերեն, 32.9 %-ը՝ անգլերեն, 15.1 %-ը նախընտրում է պատասխանել արաբերեն՝ օգտագործելով անգլերեն տերմիններ,

¹³ إشكالية تعريب التعليم العالي: مجلة مجمع اللغة العربية بالقاهرة العدد 81، ص 244-262. من <http://www.marefa.org/sources/index.php>

իսկ 3%-ը՝ պատասխանել միաժամանակ երկու լեզուներով: 50.7 %-ը կարծում է, որ անգլերենով դասավանդումը նվազեցնում է դասախոսությունների ընթացքում նրանց մասնակցության աստիճանը: Ուսանողների 77 %-ը կողմ է արաբերենով դասավանդմանը, 8.7 %-ի համար տարբերություն չկա, թե երկու լեզուներից որով է իրականացվում դասավանդումը: Հարցվողների 92.9 %-ը հայտնել է, որ արաբականացումը կարելի է սկսել անմիջապես¹⁴:

- **Շարունակել օտար լեզուների դասավանդումը**

Նրանք, ովքեր ազգային լեզվով դասավանդման կոչ են անում, միևնույն ժամանակ հորդորում են շարունակել օտար լեզուների դասավանդումը, որովհետև գիտական առաջընթացին հետևելու համար օտար լեզվի տիրապետելը պարտադիր պայման է: Սակայն մեծ տարբերություն կա օտար լեզվին տիրապետելու և այն ազգային լեզվի փոխարեն օգտագործելու միջև: Օտար լեզվի տիրապետելը գիտության ցանկացած ոլորտում նպաստում է բարեկրթությանը և դրա խորհրդանիշն է հանդիսանում, մինչդեռ այն ազգային լեզվի փոխարեն օգտագործելը տվյալ լեզվի վախճան է նշանակում:

Արաբականացման քաղաքականության հիմնական նպատակն է վերոնշյալ մարտահրավերներին դիմագրավելը: Լինելով գլխավորապես քաղաքական խնդիր՝ այն անմիջականորեն կապված է ներարաբական քաղաքական հարաբերությունների բարդ խնդիրների հետ, բայց միևնույն ժամանակ կարող է դառնալ միավորիչ այնպիսի հարց, որն արդյունքում իր դրական ազդեցությունը կարող է ունենալ

¹⁴ الجار الله، جمال والأنصاري، لبنى : آراء طلاب الطب ومواقفهم من تعليم الطب باللغة العربية. مجلة طب الأسرة والمجتمع. 1995 المجلد 2 العدد 2 : ص 63

համաարաբական կարևոր քաղաքական այլ խնդիրների լուծման վրա:

**ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ
ԱՐԱԲԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ 20-Ը
ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ**

Ամփոփում

Մերվաթ Ջումա Աբդալլահ Օսման

mervatgomaa0@gmail.com

Բանալի քառեր՝ արաբականացում, գրական արաբերեն, բնագիտական առարկաների դասավանդում, լեզվական հակամարտություն

Բնագիտական առարկաների դասավանդումը ոչ արաբերենով վտանգավոր երևույթ է, որն արդեն մոտ 1.5 դար է մեծ տարածում է գտել գրեթե բոլոր արաբական երկրներում: Լինելով գլխավորապես քաղաքական խնդիր՝ այդ երևույթն անմիջականորեն կապված է ներարաբական քաղաքական բարդ հարաբերությունների հետ, բայց միևնույն ժամանակ այդ խնդրի լուծումը կարող է դառնալ միավորիչ այնպիսի հարց, որն արդյունքում իր դրական ազդեցությունը կարող է ունենալ համաարաբական այլ կարևոր քաղաքական խնդիրների լուծման վրա:

THE ARABIZATION PROCESS OF TEACHING SCIENCES IN THE ARAB COUNTRIES IN THE SECOND HALF OF 20TH CENTURY

Summary

Mervat Gomaa Abdallah Osman
mervatgomaa0@gmail.com

Keywords: *arabization, literary Arabic, teaching of disciplines, language conflict*

In the Arab world, teaching of scientific disciplines in a language other than Arabic which has become very common the last 150 years tends to be a threatening phenomenon. Being mostly a political issue, it is closely connected with inner complicated political relations in Arabic world. At the same time, it may become a unifying factor, and have its positive influence on the solution of other pan-arabic political issues of high importance.

ПРОЦЕСС АРАБИЗАЦИИ ПРЕПОДАВАНИЯ ЕСТЕСТВЕННОНАУЧНЫХ ДИСЦИПЛИН В АРАБСКИХ СТРАНАХ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ XX ВЕКА

Резюме

Мерват Джума Абдаллах Осман
mervatgomaa0@gmail.com

Ключевые слова: *арабизация, литературный арабский язык, преподавание естественнонаучных дисциплин, языковой конфликт*

Тот факт, что преподавание естественнонаучных дисциплин на протяжении полутора столетий почти во всех арабских странах не ведется на арабском языке, представляет большую опасность с точки зрения языковой ситуации. Будучи главным образом политической проблемой» это явление непосредственно связано со сложными внутриарабскими политическими отношениями, однако, вместе с тем, решение этой проблемы может стать вопросом, объединяющим различные силы, что в результате может иметь положительное влияние также на решение других общеарабских политических проблем.